

Հ Ի Ա Հ Ա Ն Գ
ԽՈՇՈՐ ՅԵՂՋՅՈՒՐԱՎՈՐ
ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ
ՍԵՐՄՆԱՎՈՐՈՒՄՆ
ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

636

Հ-99

Հ Ա Յ Պ Ե Տ Հ Ի Ա Տ

ՅԵՐԵՎԱՆ

1940

636

պ.

h-99

30 JUL 2010

Հ Ր Ա Հ Ա Ն Ք
ԽՈՇՈՐ ՅԵՂՋՅՈՒՐԱՎՈՐ
ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ
ՍԵՐՄՆԱՎՈՐՈՒՄՆ
ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ Ա Յ Պ Ե Տ Հ Ր Ա Տ

ՅԵՐԵՎԱՆ

1940

24/3
40

ИНСТРУКЦИЯ
ПО ПРОВЕДЕНИЮ ИСКУССТВЕННОГО ОСЕМЕНЕНИЯ
КРУПНОГО РОГАТОГО СКОТА
Армгиз, Ереван, 1940

I. ԿԱՅԱՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Խոզեր յեղջյուրափոր անասունների արհեստական սերմնափորումը կիրառվում է վորպես զոոտեխնիկական միջոցառում, հոտի վորակական լավացումն արագացնելու, բարձրարժեք տոհմային ցուլերին ավելի լավ ոգտագործելու և վորպես անասնաբուժական ձեռնարկում՝ վարակիչ հիվանդությունների տարածման դեմ պայքարելու:

2. Արհեստական սերմնափորման կայանները կազմակերպվում են հաստատված պլանին համապատասխան, վորպես կանոն, վարակիչ հիվանդություններից ազահով տնտեսություններում (ֆերմաներում), կոլտնտեսությունների նախրի, կոյսրիտեղականների և մենատնտեսների անասունների, իսկ քաղաքներում և բանվորական ավաններում՝ քաղաքի և ավանի բնակչության պատկանող կովերի սպասարկման համար:

3. Անասուհիով տնտեսություններում արհեստական սերմնափորման կայաններ կազմակերպելու համար անսպախման պահանջվում է հանրապետական Հողօգտագործատի անասնաբուժական վարչության թույլատվությունը:

4. Յեթե պլանով նախատեսնված է սպերմայի փոխադրում, այդ դեպքում հիմնական կայանին կարող են ամբացվել ոժանդակ կայաններ: Հիմնական և ոժանդակ կայանների միջև ընկած տարածությունը փորոշվում է սպերմա անդամոխելու համար առկա յեղած փոխադրական միջոցներով այն հաշվով, վորպեսզի սպերմայի ստացման մոմենտից մինչև նրա ոժանդակ կայանում ոգտագործելը 24 ժամից ավել չտեի:

Ի տարբերություն հիմնականի, ոժանդակ կայանն աշխատում է հիմնական կայաններից փոխադրված սպերմայով: Սպերմայի փոխադրման և սերմնափորման համար անհրաժեշտ

դործիքներն ու նյութերը (տեղամասները, փորձանոթները, հա-
յեխները և այլն) ամբողջով և՛ օժանդակ կայանին:

5. Վարակիչ հիվանդութիւնների նկատմամբ ասպահով
տնտեսութիւններից անասպահով տնտեսութիւններ սպերմայի
փոխադրումը թույլատրւում է յուրաքանչյուր առանձին դեպ-
քում շրջանի անասնաբուծի կողմից, վերը պարտաւոր է տալ
տեխնիկ-սերմնավորողին ցուցմունքներ՝ ձեռնարկելու անհրա-
ժեշտ միջոցառումներ, կանխելու ինֆեկցիայի տարածման հը-
նարավորութիւնը և անասպահով տնտեսութիւններից արհեստա-
կան սերմնավորման կայան հետ բերված առարկաների ախտա-
դերձելու տեխնիկայի մասին:

6. Արհեստական սերմնավորման համար հիմնական կամ ու-
ժանդակ կայաններին (միջ ալիւլի քան յերեք կիլոմետր շառա-
վիղով) կարող են կցվել կովերի մանր նախիրներ, վորոնց
համար աննպատակահարմար է ինքնուրույն կայաններ կազմա-
կերպել: Կցումը կատարւում է հողրաժնի դիտութեամբ և
թույլտւութեամբ:

II. ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

1. Արհեստական սերմնավորումն սկսելուց մեկ և կեսից
մինչև յերկու ամիս առաջ, հողրաժնիները կազմակերպւում և
անց են կացնում արհեստական սերմնավորման տեխնիկներին և
նրանց ոգնականների պատրաստման դասընթացներ: Նախորդ
տարիներում պատրաստված տեխնիկ սերմնավորողներն ու նը-
րանց ոգնականները վերապատրաստման դասընթացներն անց-
նում են կրճատ ծրագրով:

2. Տեխնիկ-սերմնավորողների պատրաստման դասընթաց-
ները կոմպլեկտավորւում են՝

ա) կոչտնտեսութիւնների տեխնիկ-անասնապահներից

բ) կոչտնտեսականներից ու կոչտնտեսահիներէց, առաջին
հերթին՝ անասնապահական բրիգադների կազմից և նախորդ
տարիներում արհեստական սերմնավորման կայաններում աշ-
խատողներից:

3. Կուրսերի համար թեկնածուներ ընտրելիս անպայման
մասնակցում է արհեստական սերմնավորման հրահանգիչը կամ
յենթաշրջանային ղոռտեխնիկը:

4. Արհեստական սերմնավորման հրահանգիչներին ու տեխ-

նիկներին պատրաստման դասընթացներն անց են կացւում
ԽՍՀՄ-ի Հողթողկոմատի կողմից հաստատված ծրագրով:
Պատրաստման տեղութիւնը պետք է լինի միջ պակաս մեկ ամ-
սից:

5. Դասընթացների աշխատանքների արդյունքներն ամփո-
փելու և սովորողների դիտելիքներն ստուգելու համար անհրա-
ժեշտ է կազմակերպել վորակավորող հանձնաժողովներ: Տեխ-
նիկ-սերմնավորողների դիտելիքների ստուգումն անց է կաց-
ւում արհեստական սերմնավորման տեսչի մասնակցութեամբ:
Սմեն մի քննութիւն տվողին, հողային որդանների կողմից
տրվում է դասընթացներն ավարտելու մասին վկայական, նը-
շելով առաջադիմութեան թիւնշանները:

III. ՍԵՐՄՆԱՎՈՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԸ ՇԵՆՔԵՐՈՎ, ԿԱՇԱՎՈՐՈՒՄՈՎ ՈՒ ԳՈՒՅՔՈՎ ԱՊԱՀՈՎԵԼԸ

1. Կայանները կազմակերպւում են այդ նպատակի համար
հատուկ կառուցված կամ հարմարեցված շէնքերում: Արհես-
տական սերմնավորման կայանների համար հատուկ շէնքերը
կառուցվում է ԽՍՀՄ-ի Հողթողկոմատի կողմից հաստատված
տիպարային նախադժով:

Նույն նախադժով դեկավարվելով, կայանի համար կարելի
յէ հարմարեցնել տնտեսութիւնում յեղած պատրաստի շէնքը:
Շէնքը տաքացնելու համար անհրաժեշտ է ներսում ունենալ
(աղյուսյա) մշտական վառարան: Կայանի շէնքը (լաբորատո-
րիան և ցուլից սպերմա ստանալու ու կովերին սերմնավո-
րելու մանեթը) պետք է լինի տաք, չոր, լուսավոր և բավա-
րարի սանիտարական պահանջներին: Աշխատանքի ժամանակ
ջերմութեան աստիճանը պետք է լինի մոտ 20 աստիճան, սա-
տանումներով՝ 17-25 աստիճանի սահմաններում (ըստ Յելսի-
ուսի):

Աշխատանքի ժամանակ կայանում չի թույլատրւում ջեր-
մութեան ուժեղ տատանումներ. դրա համար կայանի մուտքե-
րը պետք է ունենան հողմարդեյներ (տամբուր): Ծածկոցի տակ
կամ բաց ողում սպերմայի հետ ոչխատանք կատարել չի թույ-
լատրւում:

2. Բարձր ջերմութեան մնասակար ազդեցութիւնից խուսա-

իկելու համար, հարավային չրջաններում կայանները պետք է կառուցել անջնամթափանց նյութից, լուսամուտներով դեպի արևելք իսկ պատերը դուրի և ներսի կողմից սպիտակացնել: Տարվա շոգ ժամանակ պետք է աշխատել վաղ առավոտյան և յերեկոյան:

3. Աշխատանքի ժամանակ լուսավորությունը կայանում պետք է լինի ցրված: Դրա համար արևի կողմից լուսավորվող պատուհանները պետք է վարադուրել բաց դուռնի վարադուրներով (չըղարչից կամ քաթանից): Մանեժի պատուհանի դիմաց դրվում է դաղդահը, վորտեղ և անց է կացվում սերմնավորումը:

4. Անասնաբուժարանների շենքերում չի թույլատրվում հիմնել սերմնավորման կայաններ: Կայաններում արհեստական սերմնավորման համար ոգտադրվող նյութերից բացի ուրիշ դեղորայք պահել չի թույլատրվում:

5. Սերմնավորումից առաջ և աշխատանքի ժամանակ արհեստական սերմնավորման շենքերը պարբերաբար պետք է խնամքով ավտահանվեն՝ սպիտակեցվեն թարմ հանդցրած կրով և լավ ոգափոխվեն:

Կայաններին կցված նախրներում վարակիչ հիվանդություններ հայտնաբերելու դեպքում տեխնիկ-սերմնավորողը պարտավոր է ժամանակավորապես դադարեցնել աշխատանքը, անմիջապես տեղեկացնել չրջանային անասնաբուժական աշխատողներին և ստանալ նրանցից անասնաբուժական միջոցառումների մասին անհրաժեշտ ցուցմունքներ:

6. Յուրաքանչյուր կայան, բացի արհեստական սերմնավորում անցկացնելու հատուկ դործիքներից, պետք է ունենա սղնատեսական սարքավորում՝ համաձայն սույն հրահանգի վերջում գետեղած ցուցակի:

IV. ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆԱԽԱՍՏԱՍՏՈՒՄԸ

1. Ցեղական և վորակական կազմի տեսակետից արտադրող ցուլերը ընտրվում են զոոտեխնիկական տոհմային աշխատանքի պլանին համապատասխան: Արհեստական սերմնավորման թույլատրված արտադրողները պետք է ունենան տվյալներ իրենց ծագման և մթերատվության մասին: Արհեստական սերմնավոր-

ման կայաններում աշխատող արտադրողների նշանակումը և նըրանց կովերին կցումը կատարվում է Պետտոհմաբուժարանների և չրջհոլքաժինների կողմից: Արտադրողների ընտրության համար կազմվում են հանձնաժողովներ հետևյալ կազմով՝ ունեկցիոնների (Պետտոհմաբուժարանների գործունեյության չրջաններում), կամ հոլքաժնի տոհմային դժով աշխատող զոոտեխնիկի (Պետտոհմաբուժարանների գործունեյության չրջաններից դուրս), անասնաբուժի արհեստական սերմնավորման հրահանգչի, ֆերմայի վարիչի և տեխնիկ սերմնավորողի:

2. Արտադրողները իրենց արյան աստիճանով և ծագման մթերատվությամբ բոլոր դեպքերում պետք է լինեն արհեստական սերմնավորման կայաններին կցված կովերից բարձր և պետք է ապահովեն սերնդի արյան աստիճանի ու մթերատվության բարձրացումը և եղտերյերի լավացումը:

3. Բարձրարյուն անասունների գլխակազմ ունեցող տոհմային խորհտեսությունների և կոլտեսսային տոհմային ֆերմաների արհեստական սերմնավորման կայաններում նշանակվում են միայն լավագույն զոտարյուն, պետական տոհմային գրքում գրանցված արտադրողները և առաջին հերթին ըստ իրենց սերնդի ստուգված արտադրողներից:

Տոհմային խորհտեսությունների և տոհմային ֆերմաների արհեստական սերմնավորման կայաններում գտնվող արտադրող ցուլերին լրիվ ոգտադործելու նպատակով նրանց են կցում մտտակա կոլտեսսությունների, կոլտեսսականների և մենատընտեսների կովերը:

4. Ցածր զենեացիաների մեախ անասուն ունեցող տնտեսություններում արհեստական սերմնավորման կայանները, վորպես կանոն, պետք է ոգտադործեն պետական տոհմային գրքում գրանցելու համար սահմանված պահանջները բավարարող պլանային ցեղի արտադրողներ, պահպանելով սույն հրահանգի 4-րդ գլխի յերկրորդ կետը:

5. Անասունների մասսայական մեախղացման չրջանների արհեստական սերմնավորման կայաններում թույլատրվում է ոգտադործել պետական տոհմային գրքում գրանցված պլանային ցեղի արտադրող ցուլեր, իսկ նրանց բացակայության դեպքում՝ չրջանային տոհմային գրքում գրանցվածներից լավագույններին, ապահովելով սույն հրահանգի 4-րդ գլխի 2-րդ կետը:

6. Մեծ բեռնվածութիւն ունեցող արհեստական սերմնավորման կայաններում (մեկ արտադրողին 500-ից ավելի կով), յեթե նրանց միաժամանակ կցված են տոհմային ֆերմաներից բարձր մթերատու կովեր, այդ դեպքում պետք է թույլ տալ ոգտադորձելու միայն ելիտ ու առաջնակարգ այն արտադրողներին, վորոնք պատկանում են բարձր մթերատու և զտարյուն անասունների խմբին և իրենց մթերատուութեան ու եքստերիերի հիմնական նշաններով բարելավող են հանդիսանում: Անասունների մասսայական մետրիզացման շրջանների համար մեծ բեռնվածութիւն ունեցող արհեստական սերմնավորման կայաններում կարելի չէ թույլատրել ոգտադորձելու պետական տոհմային դրքում դրանցված և սույն հրահանգի 4-րդ դիւի 2-րդ կետի պահանջները բավարարող արտադրողներ:

7. Տոհմային ֆերմաներում և տոհմային խորհանտեսութիւններում կովերի կցումն արտադրողներին պետք է կատարվի սելեկցիոն պլանների ու անհատական բոնիտրովկայի դրանցումներին խիստ համապատասխան, իսկ մնացած տնտեսութիւններում՝ համաձայն զուգավորման ու մետրիզացման պլանների և բոնիտրովկայի տվյալների:

8. Արդելվում և՛ արտադրողներով նրանց մոտ ազդակցութեան մեջ գտնվող մայրերի (կովերի) սերմնավորում կատարելը, բացառութեամբ այն դեպքերի, յերբ այդ նախատեսված է սելեկցիոն պլանով և հաստատված է Հողօգտագործարի կողմից:

Մասսայական ազդակցական բուծումը կանխելու նպատակով անհրաժեշտ է արհեստական սերմնավորման կայաններում ցուլերի պարբերական փոխարինում կազմակերպել, կատարելով այդ համապատասխան տոհմային աշխատանքների պլանի, մասավորապես 3-ից 4-րդ տարում: Այդ դեպքում սերմնավորման կայան բերված նոր արտադրողները, վորպես կանոն, իրենց վորակով նախորդներից ավելի բարձր պետք է լինեն:

Ամեն մի արհեստական սերմնավորման կայանում նշանակվում են մեկից—յերկու կամ ավելի արտադրողներ, սելեկցիոն պլանի և անհատական բոնիտրովկայի դրանցումներին համապատասխան:

9. Արհեստական սերմնավորման կայանների բոլոր արտադրողների համար լրացվում են ԽՍՀՄ-ի Հողօգտագործարի

կողմից սահմանված ձևի քարտեր, վորոնց իսկական որինակը պահվում է տնտեսութիւններում, իսկ պատճենները շրջանային հոգրափիններում:

10. Արհեստական սերմնավորման կայաններում թույլատրվում է ոգտադորձել միանգամայն առողջ, անասնաբուժաանխտաբական մշակում անցած արտադրողներ (հետադրոտում բուժեցնելուցի, տուբերկուլյոզի և տրիխոմոնիազիսի):

11. Սերմնավորումն սկսելուց վոչ ուշ քան մեկ և կես—յերկու ամիս առաջ արտադրողներն առանձնացվում են և կերակրվում սույն հրահանգով առաջադրված կերաբաժնով: Արտադրող ցուլերի ընտրութեան և ըստ կայանների բաշխում կատարելու հետ միաժամանակ, շրջանային հրահանգի մասնակցութեամբ պետք է կազմակերպել նրանց սեռական կարողութեան և սերմի վորակի ստուգում:

12. Ստուգվող բոլոր ցուլերին նախապատրաստական շրջանում արհեստական հեշտոց են ծածկել տալիս և սերմ մանրադիտակի տակ հետադրոտում: Արտադրող ցուլերի սերմի վորակը պետք է ստուգել առնվազը հինգ որը մեկ անգամ: Ստուգման որը արտադրող ցուլին պետք է տալ արհեստական հեշտոցի վրա յերկու ծածկում 2-3 ժամ ընդմիջումով: Նախապատրաստական շրջանի վերջին հնգորդակում սերմի վորակի ստուգումը կատարվում է յերկու որը մեկ անգամ:

13. Կայաններին կցված բոլոր արտադրողները սերմնավորման սկզբին պետք է ունենան Մ-4-ից վոչ ցածր զնահատականով սերմ, այսինքն՝ միջին վորակի, վորի մեջ սերմնաբջջներ ի առնվազն 80 տոկոսն ուղղակի առաջընթաց շարժում ունեն:

V. ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ԿԵՐԱԿՐՈՒՄՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

1. Արտադրող ցուլերի կերակրման ու պահպանման ժամանակ պետք է առաջնորդվել հետևյալ հիմնական պայմաններով.

ա) արտադրողներին օպիտակուցային նյութերով և վիտամիններով հարուստ կերերով ապահովելը, — դա բարձրացնում է արտադրողի սեռական ակտիվութիւնը.

բ) կերաբաժնի մեջ հանքային նյութեր մտցնելը.

դ) կերարածին մեջ բաղմապան, վոչ չափազանց ծախարուն թե կոպիտ և թե խտացրած կերերի մոցները:

դ) արտադրող ցուլերին ամեն ուր զբոսանքի հանելը՝ ամուսնի որեկան առնվազն 6-8 ժամ, ձմեռը՝ 4-5 ժամ տեղում թյամբ:

յե) արտադրող ցուլերի ամենուրյա մաքրումը:

Անհրաժեշտ և հաճախակի, առնվազն ամիսը մեկ անգամ արտադրող ցուլերին անասնաբուժական քննության յենթարկել և կշռել:

Արտադրող ցուլերի զբոսանքի լավագույն ձևն և արածացնելը և նրանց լողացումն ամառը, իսկ ձմեռը՝ զբոսանքն ու լծած աշխատանքը, բացառությամբ չափ ավատ յեղանակի (ամառն անձրևային, կամ ձմեռը բուք որերին):

Յուլերին կարելի չե թույլատրել լծած աշխատեցնել նաև ամառը: Ուրիշ շոգ ժամերին (ամառը) ցուլերին չպետք և աշխատեցնել: Յուլերին կարելի չե աշխատեցնել դանդաղ քշելով:

Յուլերին աշխատեցնելու դեպքում պետք և հետևել, վորպեսզի նրանք չձանրաբեռնվեն և չհոգնեն: Յուրաքանչյուր ցուլի լծապարքը պետք և լինի առանձին և խնամքով հարդարած:

2. Արտադրող ցուլերին կերակրելու և խնամելու ժամանակ անհրաժեշտ և հետևել, վորպեսզի նրանք միշտ լինեն «դործարանային մարմնում», այսինքն չճարպկալի, բայց և զուգավորման ժամանակ չկորցնեն իրենց նորմալ դիրությունը: Այդ նպատակով առաջադրվում և ամսական յերկու անգամ քստուղել արտադրողներին կենդանի քաշը:

3. Արտադրող ցուլերի համար լավագույն կերեր են հանդիսանում՝

ա) ձմեռը — լավ վորակի մարգագետնային խոտ ու խտացրած կերեր. (վարսակ, կամ վարսակի, ցորենի թեփի, կորեկի և քուսպի խառնուրդ), ինչպես նաև արմատապտուղներ (լոփ և զադար) կամ լավ վորակի սիլոս:

բ) ամառը — արոտ, մսուրում կանաչ խոտով կերակրելը և նույնն ինչ ձմեռը՝ խտացրած կերերի խառնուրդ ու արմատապտուղներ:

4. Բեղմնավորման չրջանում որեկան 2, իսկ տարբեր որե-

րին 3 ծածկում կատարող տոհմային արտադրող ցուլերի համար առաջադրվում և սահմանել հետևյալ կերարածիները:

Արտադրող ցուլի կենդանի քաշը (կիլոգրամներով)	Յուլին լծած աշխատանք- նելու դեպքում		Չախատացնելու դեպքում	
	Կերի միավոր (կ. գր.)	Մարավող սպիտակ. (կ. գր.)	Կերի միավոր (կ. գր.)	Մարավող սպիտակ. (կ. գր.)
500	8,8	0,73	7,6	0,61
600	9,8	0,81	8,7	0,69
700	10,8	0,89	9,6	0,77
800	11,5	0,96	10,3	0,85
900	12,3	1,04	11,1	0,93
1000	13,2	1,12	12,0	1,00

5. Համաձայն վերևում բերված նորմաների, արտադրող ցուլերին ձմռան չրջանում կերակրելու համար որեկան յերկու, իսկ տարբեր որերին յերեք ծածկում կատարելու և թեթև ֆիզիկական աշխատանքի ժամանակ առաջադրվում և սահմանել հետևյալ որինակելի կերարածիներ՝

ա) Արտադրող ցուլը 600 կգր. կենդանի քաշ ունենալու դեպքում

Մարգագետնային խոտ միջին վորակի	10	կիլոգրամ
կամ տափաստանի խոտ (դանադան հացազգի բույսեր)	10	»
կամ ազվույան խոտ	9	»
նոտ ցրած կերերի խառնուրդ՝		
վարսակ	2½	»
ցորենի թեփ	1½ — 2	»
կորեկ (չարգած վիճակում)	½	»
արևածաղկի քուսպ	¾	»
Արմատապտուղներ (զադար)	5	»
Վոսկրայուր	0,05	»
Կերակրի աղ (կոշա)		աղափ

բ) Արտադրող ցույն 800 կիլոգրամ կենդանի քաշ ունենալու դեպքում.

Մարդագետնային խոտ միջին վորակի	12	կիլոգրամ
կամ տափաստանի խոտ (զանազան հացազգի բույսեր)	12	»
կամ առվույտի խոտ	10	»
Ստացրած կերերի խառնուրդ՝		
վարսակ	3½	»
ցորենի թեփ	2	»
կորեկ (ջարդած վիճակում)	¾	»
արևածաղկի քուսպ	1	»
Արմատապուղներ (զաղար)	6	»
Չոսկրալյուր	0,05	»
Կերակրի աղ (կոշա)		ազատ

6. Յուլերի պոտենցիան բարձրացնելու, մանավանդ բնույթով ածուխյունը բարձր լինելու դեպքում (յուրաքանչյուր որը 3 ծածկում), առաջադրվում է լրացուցիչ կերպով նրանց կերաբաժնին յուրաքանչյուր արտադրողի համար որեկան ավելացնել՝ մինչև 10 լիտր սերղատած կաթ և մինչև 400 գրամ արյան ալյուր:

7. Ամռան շրջանում արտադրող ցուլերը սննդաբար նյութերի զգալի մասը (ընդհանուր պահանջի մինչև 50 տոկոսը) ստանում են արոտում, կամ թե դոմում արվող կանաչ խոտից: Կերերի սննդաբար նյութերի մնացած պակասորդը (մինչև լրիվ նորման) պետք է լրացվի խոտացրած կերերի հաշվին:

8. Որպես կերաբաժնի կոպիտ կերերը պետք է յերկու բաժին անել, իսկ խոտացրած ու հյութալի կերերը՝ յերեք բաժին:

Արտադրող ցուլի ճիշտ կերակրման և պահպանման ցուցանիշներն են՝ լավ պոտենտությունը, ցուլից որեկան վոչ պակաս յերկու ելակուլյատ ստանալը՝ 8-12 խորանարդ սանիմետր ընդհանուր քանակի լավորակ սերմ:

9. Յուլերին ձմեռը պետք է ջրել որեկան 2, իսկ ամառը 3-4 անգամ: Ոմելու ջուրը պետք է լինի լավ վորակի, թարմ ու վոչ էլ շատ սառը (8-10 աստիճան): Յուլերին պետք է ջրել ստանձին դուլից կամ թե խմորից:

10. Արտադրող ցուլերին պետք է պահել հատուկ կառուցված կամ հարմարեցված շենքերում (կացոցներում): Կացոցը պետք է ունենա 2 մետր յերկարություն, 1,5 մետր լայնություն:

Շենքը, վորտեղ պահվում են ցուլերը, պետք է լինի անպայման մաքուր, լուսավոր և չոր: Կացոցի վերևի մասում ամրացվում է տախտակ, վորի վրա գրվում է ցուլի անունը, ցուլը, ծննդյան ժամանակը, կենդանի քաշը և ծագումը:

11. Յուլերին ամեն որ պետք է մաքրել խոզանակով, մարմնի կեղտոտած տեղերը լվանալ ջրով, ինչպես նաև մաքուր վիճակում պահել նրա թլիքը:

12. Կճղակները յերկարանալիս կտրում են տարեկան 2-3 անգամ: Բացի կտրելուց, անհրաժեշտ է ամեն որ նայել և դոմաղրից ու կեղտից մաքրել կճղակները:

13. Յուլի հետ պետք է վարվել մեղմորեն, վստահ, բայց վոչ կոպիտ: Մշտական հաստատ և վստահ վերաբերմունքը ցուլի մեջ առաջացնում է հնազանդություն և յենթարկում: Յուլերի հետ վարվելու հարմարության և անվտանգության տեսակետից, առանձնապես չար ընափորություն ունեցողների նըկատմամբ, անհրաժեշտ է նրանց քթին ող անցկացնել:

Քթի ողը վործված մարդ պետք է անցկացնի (զոոտեխնիկը, անասնաբուժը, տեխնիկ-անասնապահը)՝ հատուկ ունելիքով ծակելով քթի միջնորմի վաղուկ մասը:

VI. ԿԱՅԱՆԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՅԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ

1. Կայանի աշխատանքի ճիշտ ցուցանիշներն են՝
ա) արհեստական սերմնավորման պլանի կատարումը,
բ) մայր անասունների մաքսիմալ բեղմնավորման տոկոսը,
գ) կովերի բեր դալու (դուգավորման ցանկություն) հըավոգության կանոնավոր կաղմակերպումը և բերի շրջանում պոնվող կովերի լրիվ ընտրությունը:

դ) աշխատանքի տեխնիկայես ճիշտ կատարելը,
յե) սույն հրահանգին և սելեկցիոն տոհմային աշխատանքի պլանին համապատասխան ցուլերի ընտրությունը:

2. Կայանի աշխատանքներն սկսելուց առաջ, շրջնոդրածինը ստուգում է նրա պատրաստականությունը արհեստական սերմնավորման համար (անհրաժեշտ դործիքներով ու նյութերով, սերմնավորող կաղրերով ու արտադրողներով ապահովված յինելը և այլն):

3. Մեկ հրահանգչի կողմից սպասարկվող կայանների քանակը սահմանվում է յեղներով շրջանի տեղիտորելայից և կայանների ցանցի խտությունից:

4. Հրահանգչի (արհեստական սերմնավորման հատուկ դասընթացներն ավարտած զոտեխնիկը) ղեկավարում և վերահսկում է արհեստական սերմնավորման աշխատանքները շրջանի սահմաններում կամ նրան կցված կայանների սահմաններում:

5. Հրահանգչի պարտականությունների մեջ մտնում են՝

ա) սլան կազմելու և նրա կատարելու, նմանապես բոլոր աշխատանքների կանոնավոր անցկացման և նրանց արդյունքների պատասխանատվությունը.

բ) տեխնիկ սերմնավորողներին և մյուս անձնակազմի քննությունն ու պատրաստումը.

գ) կայանների մշտական հրահանգումը.

դ) ազդարանակցության մեջ արհեստական սերմնավորման նշանակության մասին բացատրական աշխատանք տանելը.

յե) հսկողություն՝ նյութերի խնայողաբար ծախսման վերա-

դ) արտադրողների ստուգումը սերմի վորակի նկատմամբ.

ե) հսկողություն՝ արտադրողների դրուժյան նկատմամբ.

ը) հաշվետվությունը ժամանակին ներկայացնելը.

թ) հսկողություն՝ ցուլերի ճիշտ ոգտադրման վրա:

6. Կոլտնտեսություններում արհեստական սերմնավորման գործի կազմակերպելու աշխատանքներին մասնակից են դարձնում նաև ԿԱՖ-ի վարիչներին (բրիգադիրներին):

Ֆերմայի վարիչի (բրիգադիրի) պարտականությունների մեջ մտնում են՝

ա) արհեստական սերմնավորման կայանն աշխատող ձեռքով, գուլքով և տնտեսական կահավորումով, նյութերով և կերերով ապահովելը.

բ) մայրական կազմին ժամանակին նախապատրաստելն ու հսկողությունը, վորպեսզի կայանին կցված կովերի զուգավորումը չկատարվի կողմնակի ցուլերով.

գ) բերի շրջանում գտնվող մայր կովերի քննությունը աշխատանքների ղեկավարումը (տեխնիկ-սերմնավորողի մասնակցությամբ):

7. Սերմնավորման կայանը ղեկավարում և կոլտնտեսություն վարչության կողմից նշանակված տեխնիկ-սերմնավորողը:

Տեխնիկ-սերմնավորողի պարտականությունների մեջ են մտնում՝

ա) կայանի աշխատանքի սլան կազմելը և նրա կատարումը, արհեստական սերմնավորման կայանի համար շենքի նախապատրաստումն ու կահավորումը.

բ) արհեստական սերմնավորման նշանակության մասին կոլտնտեսականների և մենատնտեսների միջև բացատրական աշխատանք տանելը.

գ) արտադրող ցուլերի նախապատրաստումը և նրանց օերմի վորակի ստուգումը.

դ) սերմի ստուգումը, դնահատումն ու սրակումը.

յե) բեր յեկող մայր կենդանիների քննությունը, արտադրողների կերակրման ու խնամքի վերահսկողությունը.

զ) հիվանդ անասունների առանձնացումը.

ե) հրահանգչին կայանի աշխատանքների վերաբերյալ տեղեկանքներ ներկայացնելը.

ը) կայանի գործիքների և կահավորման հաշվառումն ու պահպանումը.

թ) արհեստական սերմնավորման արդյունքների հաշվառումը:

Իր աշխատանքների մեջ տեխնիկ-սերմնավորողը խստորեն ղեկավարվում է արհեստական սերմնավորման հրահանգով և հրահանգչի ցուցումներով:

8. Արտադրողներին կերակրելու և խնամելու, ինչպես և կերեր ստանալու և պահպանելու համար կոլտնտեսություն վարչությունը նշանակում է պատասխանատու անձնավորություն՝ սերմնավորողի ոգնականի իրավունքներով: Յանկայի յե վորպեսզի ցուլերին խնամողն անցած լինի տեխնիկ-սերմնավորողների պատրաստման դասընթացները լրիվ ծրագրով:

9. Հավաքարարի (լվացողի) պարտականությունների մեջ են մտնում՝ շենքում մաքրություն պահպանելը, ամանեղենի և գործիքների լվանալը, բոցակիզման համար սրվածուսի պատրաստումը, ջուր տաքացնելը, կայանի տաքացումն ու լուսավորումը, կայանի սպիտակացումը, խալաթների լվանալը և այլն:

VII. ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՅԵՎ ՆՅՈՒԹԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄՆ ՈՒ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

1. Բոլոր դործիքներն ու նյութերը պետք է պահվեն մաքուր պահարանում:

Աշխատանքն ավարտելուց հետո դործիքները և ամանեղենը վաացվում են 2-3 տոկոսանի յերկածխաթթվային սոդայի դուր լուծույթով (20-30 գրամ սոդա մեկ լիտր ջրին), ապա մաքուր ջրով փոզոզում ու չորացնում:

2. Ծայրիցների և սերմընդունիչների լվանալու և հեշտոցային հայելիների թրջելու համար արհեստական սերմնավորման կայաններում դործադրում են քլորական նատրիումի մեկ տոկոսանի լուծույթ (10 գր. քիմիական մաքուր քլորական նատրիում մեկ լիտր ջրին):

Սպերմայի հետ դործ ունենալու դեպքում, ամանեղենը պետք է լինի միանգամայն չոր, կամ մեկ տոկոսանի քլորական նատրիումի լուծույթով փոզոզված, ըստ վերում փոզոզումից հետո չորացրած ամանեղենը վազ մի դեպքում թույլ չտալ ողտադործել, քանի վոր այդպիսի դեպքում նրա մակերեսի վրա քլորական նատրիումը բյուրեղանում է, վորը կարող է սերմնավորվիչներ վրա կործանիչ ազդեցութուն ունենալ:

3. Սերմնակայաններն ուղարկվում և քիմիադես մաքուր քլորական նատրիում, վորի կշռումը բաթիններով ըստ կարիքի կատարվում է դեղադործական (յեղջուրի) կշեռքներով: Կշեռքի բացակայության դեպքում քլորանատրիումի բաթինները պետք է պատրաստի չրջանային հրահանգիչը և հղված խցանով բանկաներով ուղարկի կայաններին: Քլորական նատրիումի լուծույթը կեղտոտվելուց խուսափելու համար, այդպիսին պետք է պատրաստել ամեն օր:

4. Ծայրիցներն ու սերմընդունիչները լվանալու և հեշտոցային հայելիները թրջելու համար գործադրվող քլորական նատրիումի լուծույթը կարելի յե պատրաստել թորած կամ սոփրական խմելու, բայց յեռացրած ու քամած (ֆիլտրացիայի յենթարկած) ջրով:

Առաջադրվում է լուծույթ պատրաստելու հետեյալ կարգը՝ ջուրը-մաքուր ամանի մեջ յեռացնում են 5-10 բոպե, այնուհետև պաղեցնում, քամում և չափած քանակը յյնում են հղված

խցանով բանկայի մեջ: Կշռած քլորական նատրիումը լուծում են մաքուր, պզոտություն և նստվածք չունեցող ջրի մեջ:

5. Վորովհետև չատ դեպքում ջուրը տարբեր քանակի աղեր և պարունակում, յերբեմն լուծույթ պատրաստելու համար անողտադործելի յե լինում: Այդ պատճառով լուծույթ պատրաստելուց առաջ, կայանում յեղած ջուրը ստուգվում և վորոշվում է արհեստական սերմնավորման համար օրգտադործելու նրա պիտանիությունը:


Այդ նպատակով պատրաստում են առանձին-առանձին քլորական նատրիումի 1 տոկոսանի լուծույթ (յուրաքանչյուրից մեկ լիտր), մի բաթինը տեղական ջրով, իսկ մյուսը թորած ջրով: Հետո տարբեր վործանութների մեջ վերցնում են մեկական ի. սմ. սերմ և նրանց վրա դուռչությամբ ավելացնում են՝ մեկի մեջ տեղական ջրի մեջ պատրաստած 5 ի. սմ. լուծույթ, իսկ մյուսի մեջ նույն քանակության թորած ջրի մեջ պատրաստած լուծույթ:

Արվա ընթացքում, յուրաքանչյուր յերկու ժամից հետո մանրադիտակի տակ ստուգվում է նստացրած սերմի ակտիվությունը: Յեթե տեղական ջրով պատրաստած լուծույթով նստացրած սերմի վորակը ցածր է, այդպիսի լուծույթը չի օգտադործվում և պատրաստվում է նոր լուծույթ թորած ջրով:

6. Հաշվիչ կամերայում սերմնաբջիջները հաշվելու համար, յերբ պահանջվում է սերմնաբջիջները սպանել, գործադրվում է քլորական նատրիումի յերեք տոկոսանի լուծույթ (մեկ լիտր ջրին 30 գրամ աղ): Այդ լուծույթն առաղ կերպով սպանում է սերմնաբջիջներին և նրանցով չի կարելի օգտվել այլ նպատակների համար, բացի խառնիչի ընդունարանը (ոեղեր-վուտր) յցները:

7. Չեռերը և գործիքները ախտազերծվում են ապիրում թրջած խմուճներով (տամպոնով): Խմուճները պատրաստում են դիզրոսկոպիկ բամբակից, բամանելով այն տափակ մասերի, վորոնց ներծեցնում են 96 ստիճանի սպիրտով (ոեկտիֆիկատով) և մզելուց հետո, պահելու համար տեղավորում են հղված խցանով բանկայի մեջ:

Արհեստական վաղինայի պտերը ախտահանելու համար խմուճները պատրաստում են 5-6 սանտիմետր արամաղծով, իսկ



կատարել համար 3-4 սանտիմետր տրամագծով: Դենատու-
ջատ սպիրտն արհեստական սերմնավորման աշխատանքի ժամա-
նակ կարելի չէ ոգտադործել միայն վերպես վառելանյութ:

8. Սերմնդուռնիչներն ու չպրիցները վարակադերծվում են
ներսից 65 աստիճանի սպիրտով: 65 աստիճանի սպիրտի լու-
ծույթ պատրաստելու համար վերցնում են 677 խ. սմ. 96 աս-
տիճանի սպիրտ և նրա վրա ավելացնում 323 խ. սմ. ջուր:
Սպիրտի ուժեղությունն ավելի լավ և ստուգել սպիրտաչափով:

9. Հեշտոցային հայելիները և լայն բերանով աղակյա ա-
մանները վարակադերծվում են բոցակիզումով՝ պրիմուսի ուղ-
ղահայաց կրակի վրա: Կարելի չէ ոգտվել նաև սպիրտի խծու-
ծի կամ սպիրտովկայի բոցով:

Բոցակիզման յենթարկած առարկաները պետք է միայն աշ-
քել, այլ վոչ թե կիզել:

10. Վազելինի և վազելինի յուղի ախտադերծումը (ստերի-
լիզացիան) կատարում են ջրի մեջ 20 րոպե յեռացնելով:

Հղկած ապակիով ծածկած վազելինով բանկան դնում են
ջրով ամանի մեջ պրիմուսի վրա: Վազելինով բանկան նախքան
ջրի մեջ իջեցնելը լիցանի վրայից և հատակից (տակից) անց
են կացնում ռետինե խողովակի կտորի լայն գոտի կամ բան-
կայի տակ դնում բամբակի կնձիկ: Ժամանակի հաշվածը (20
րոպե) կատարում են ջրի յեռալու մոմենտից:

VIII. ՍԵՐՍ ՍՏԱՆԱԼԸ

1. Ցուլի ճիշտ կերակրելու և խնամելու դեպքում կտրե-
լի չե տալ միջին հաշվով որեկան 2 ծածկում, իսկ կովերի
մոտոսայական բերի (դուգավորման ցանկովթյան) դալտ ուրե-
րին՝ յերեք ծածկում:

Առաջին ծածկումը կատարվում է առավոտյան, յերկրորդը
յերեկոյան: Յեթե պահանջվում է առավոտյան կամ յերեկոյան
յերկու եյակուլյատ ստանալ, այդ դեպքում կրկնակի ծածկու-
մը կատարվում է առաջին ծածկումից մեկ կամ մեկ և կես ժամ
հետո: Յերբեմն պատահում են դեպքեր, յերբ ցուլերն առաջին
ծածկման ժամանակ տալիս են վոչ լիարժեք եյակուլյատ, սո-
վորաբար քիչ քանակի սերմնարջիներով: Այդպիսի դեպքերում
ստաճադրվում է նախքան ծածկում կատարելը պահել ցուլին

մինչև ուժեղ երեկցիայի սկսելը, վորից հետո անմիջապես
թույլ տալ նրան կրկին ծածկում կատարել:

2. Վորոշ ցուլեր յերկար ժամանակվա ընթացքում կարող
են կատարել 2-3 ծածկում առանց պահանջնելու ստացվող
սերմի քանակն ու վորակը, իսկ մյուսների համար որեկան 1-2
ծածկումը կարող է լինել չափազանց:

Այդպիսի տատանումները նկատվում են վոչ միայն տալ-
բեր ցեղի ցուլերի մեջ, այլև միևնույն ցեղի և հասակի ցու-
լերի մեջ: Այդ պատճառով էլ ցուլերին ոգտադործելիս, պետք
է յուրաքանչյուր ցուլին ունենալ անհատական մոտեցում, ու-
սումնասիրելով նրանց պոտենցիան:

3. Նորմալ զարգացած և առողջ մեծահասակ ցուլը մեկ
անդամ ծածկելիս տալիս է 4-5 խ. սմ. խիտ կամ միջակ, լավ
ակտիվություն ունեցող սերմնարջիներով սերմ:

Իսկ յեթե ցուլը տալիս է 1-2 խ. սմ. նոսր և թույլ ակ-
տիվություն ունեցող սերմ, դա հաճախ ցույց է տալիս, վոր
ցուլը կանոնավոր չի կերակրվում և չի ոգտվում բավականա-
չափ զրոտանքով:

Այդպիսի դեպքերում անհրաժեշտ է անմիջապես լավացնել
ցուլի կերակրման ու պահպանման պայմանները և անպայմա-
նորեն տալ զրոտանք:

4. Սերմի ստացումը կատարվում է 1936 թ. նմուշի
(ԻՅԿ—3 մարկայի) արհեստական հեշտոցի միջոցով: Թույլա-
տրվում է դործադրել նաև 1935 թվի (ԻՅԿ—2) ու 1932 թ.
(ԻՅԿ—1) նմուշների արհեստական հեշտոցներ:

5. Ցուլի ծածկումը թույլատրվում է կատարել միայն կա-
տարելապես առողջ կովերի վրա, վորոնց մոտ բացի այդ, հեշ-
տոցային հայելու միջոցով դնելու ժամանակ հեշտոցում և
արգանդի միջկում թարախային կամ արյունախառն արտածո-
բանք չի հայտնարելված. նույնպես և չի հայտնարելված սե-
ռական որդանների լորձաթաղանթի վրա բծեր կամ բորբոքված
դրություն:

Թույլատրվում է սերմ ստանալ խրտվիլակի վրա ցուլի
ծածկում կատարելով:

6. Յեթե արհեստական հեշտոցը նոր է լվացված ու չո-
բացված, այդ դեպքում նրա ներքին խողովակը բոցակիզված
կորնցանդի միջոցով մաքրում են սպիրտում թրջած բամբակյա

տամպոնով: Յեթե արհեստական հեշտոցը յերկար ժամանակ մնացել է առանց դործադրելու, կամ առաջին անգամ է ուղտա-դործվում սերմ ստանալու համար, այդ դեպքում նրան խնամ-քով լվանում են 2-3 տոկոսային սոդայի լուծույթով, լավ չո-րացնում են մաքուր սրբիչով, վորից հետո միայն ներսը մաք-րում են սպիրտի տամպոնով:

7. Դրանից հետո արհեստական հեշտոցի արտաքին զլանի ծորակով ուետինն խողովակի միջոցով 600-1200 խ. սմ. 50-55 աստիճանի ջուր են լցնում, (նայած չըջապատող ողի ջերմա-տիճանին) այն հաշվով, վորպեսզի ցուլի ծածկելու մոմենտին հեշտոցի ներսի ջերմությունը հավասար լինի 40-42 աստիճա-նի ըստ Յելսիուսի:

8. Արհեստական հեշտոցի խողովակի ներսն իր ամբողջ յերկարությամբ լավ քսվում է բոցակիզված կորնյանդի կամ թե ապակյա յերկար ձողիկի միջոցով ստերիլ վաղելին: Հեշ-տոցի ծայրը, ուր սերմընդունարանն է դրվում, 3-4 սանտի-մետր մնում է առանց վաղելին քսելու: Կարելի չէ ուղտվել մի-այն մաքրված սպիրտակ կամ դեղին վաղելինով: Բորափաղե-լին դործադրել չի թույլատրվում: Աշխատանքի ընթացքում 2-3 սրբ մեկ անգամ վաղելինը պետք է անպայմանորեն ստերիլի-զացիայի յենթարկել:

9. Վաղելին քսելուց հետո սերմընդունիչը հաղցվում է արհեստական հեշտոցի ծայրը և ամրացվում է ուետինն պահի-չով: Նախքան այդ մաքուր ու չոր սերմընդունիչը ախտազեր-ծում են զգուշությամբ բոցակիզելով սրբիմուսի չմրող բոցի վրա, կամ թե լվանում նրան 65 աստիճանի սպիրտով, այնու-հետև լվանում 3-4 անգամ քլորական նատրիումի մեկ տոկո-սանի լուծույթով: Դրանից հետո ուետինն լայնում ծորակի միջով այնքան ող են փչում, մինչև վոր կամերայի ներսի պա-տերը իրար կպչեն:

10. Յուլի ծածկումից առաջ, արհեստական հեշտոցի ա-ղատ ծայրում, ջերմաստիճանը վորոշելու համար 1-2 բույնյով դնում են սպիրտի տամպոնով նախորոք վարակազերծված քի-միական ջերմաչափ: Վաղելնայի ներսի ջերմությունը պետք է լինի 40-42 աստիճան ըստ Յելսիուսի:

11. Յուլը կովի վրա բարձրանալու մոմենտին տևինիկ-սերմնավորողը բռնելով արհեստական հեշտոցը աջ ձեռքում,

ձախով զգուշությամբ բռնում է ցուլի թլիփը և առնադամն ուղղում դեպի արհեստական հեշտոցի անցքը: Ծածկելու ժա-մանակ արհեստական հեշտոցը պետք է բռնել մի քիչ թեք դե-րությամբ, սերմընդունիչով դեպի վեր: Յուլն առնադամը հա-նելու մոմենտին հեշտոցը պետք է շուտ տալ սերմընդունիչով դեպի ներքև, վորպեսզի ամբողջ սերմը հավաքվի սերմընդու-նիչի մեջ: Դրանից հետո արհեստական հեշտոցից խափույն բաց է թողնվում ողը, իսկ սերմով լցված սերմընդունիչը զգուշու-թյամբ հանվում է և ապակյա կախարիչով կամ մաքուր թղ-թով անմիջապես ծածկվում:

12. Դրանից անմիջապես հետո արհեստական հեշտոցից ջուրը թափում են և խնամքով լվանում սնդի և վաղելինի մնացորդներից 2-3 տոկոսանի սոդայի զոլ լուծույթով, մա-քուր տաք ջրով վորոշում, մաքուր սրբիչով լավ սրբում կամ չորացնում:

Ստախ վարելվում է արհեստական հեշտոցը վաղելինից չը-լվացած վիճակում պահել, վորովհետև վաղելինը միանալով ուետինի հետ՝ արագ կերպով փչացնում է նրան:

1932 թ. ИВК—1 և 1935 թ. ИВК—2 նմուշների արհես-տական հեշտոցների նախապատրաստումը կատարվում է նույն յեղանակով, ինչ 36 թ. նմուշինը, լացատրությամբ այն բանի վոր՝

ա) 1932 թ. նմուշի հեշտոցի մեջ ջուրը պետք է լցվի մին-չև պտուտակային խցանի մակարպակը:

բ) 1935 թ. նմուշի արհեստական հեշտոցում՝

1. հեշտոցի ներքին խողովակը ախտահանելուց հետո բո-ղորտի խոռոչով պետք է մաքրել նաև ուետինն՝ ձաղարը,

2. սերմընդունիչը ամրացնել ձաղարի մեջ և ապա՝ ձաղա-րը հաղցնել արհեստական հեշտոցի վրա:

13. Արհեստական հեշտոցով աշխատելիս, վոր մի դեպքում չի կարելի թույլ տալ վորպեսզի ուետինն խողովակը չափադանց ձգված կամ թե մոլորված լինի. յեթե հնչումը լրիվ չէ, այդ դեպքում խողովակի ներքին անցքը չի փակվում: 1935-36 թ. թ. նմուշի արհեստական հեշտոցի մեջ ջրի և ողի քանակը կար-գավորվում է ցուլի առնադամի մեծության համեմատ: Վոր-քան մեծ է առնադամը, այնքան քիչ ջուր է լցվում և ընդ-հակառակը:

Ներսիս և Եսայի Խոզովակը (Կամերան) պիտի հարթ լինի ու բավականաչափ վաղելին քսած: Խոզովակի մեկ մակերեսը խորու ու բորդ է, իսկ մյուսը՝ հարթ: Կամերան հաղցնելիս պետք է հետեւել, վորպեսզի նրա հարթ մակերեսը լինի դարձված դեպի արհեստական հեշտոցի լուսանցքը: Ծածկելու մոմենտին արհեստական հեշտոցի ջերմությունը ներսում պետք է հավասար լինի 40-42 աստիճան ըստ Ցելսիուսի:

